Փաստ. անվանումը	Պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության գնահատման և հավելավճարի սահմանման կանոնակարգ
Փաստ. N	ԵՄՀ/ԸԿ-ԿԳ-29-02
Հաստատման ամսաթիվը	01/03/2012
Վերջին վերանայման ամսաթիվ	30/03/2021
Հաստատող մարմինը	Գիտական խորհուրդ
Մշակող	Որակի ապահովման կենտրոն
Ներդրման/իրականացման պատասխանատու	Որակի ապահովման կենտրոնի ղեկավար

ՓԱՍՏԱԹՂԹԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամսաթիվ	Կատարված փոփոխություն	Անուն, ազգանուն, պաշտոն Ստորագրություն
30/03/2021	Կարգում վերանայվել է ամբիոնի վարիչի գնահատման, պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական աշխատանքների գնահատման ռուբրիկները	Սուրեն Օհանյան, Գիտական խորհրդի նախագահ Մարիամ Ջիլավյան, ՈԱ կենտրոնի ղեկավար
30/03/2021	Կարգում ավելացվել է ուսանողների կողմից դասախոսների գնահատման ընթացակարգը	Սուրեն Օհանյան, Գիտական խորհրդի նախագահ Մարիամ Ջիլավյան, ՈԱ կենտրոնի ղեկավար
14/04/2017	Կատարվել են մասնակի լրացումներ (ամբիոնի վարիչներին գնահատում է ռեկտորը) Կարգի 3.2 և 5.1 կետերը խմբագրվել են	Սուրեն Օհանյան, Գիտական խորհրդի նախագահ Մարիամ Ջիլավյան, ՈԱ կենտրոնի ղեկավար
23/12/2015	Կարգը մասնակիորեն վերանայվել և լրամշակվել է	Սուրեն Օհանյան, Գիտական խորհրդի նախագահ Մարիամ Ջիլավյան, ՈԱ կենտրոնի ղեկավար

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության գնահատումն անցկացվում է՝ համաձայն ՀՀ կրթության մասին, բարձրագույն և հետբուհական կրթության մասին օրենքների, ՀՀ կրթության և գիտության նախարարության որակի գնահատմանն ուղղված փաստաթղթերի, համալսարանի կանոնադրության և սույն կանոնակարգի:

1.2. Դասախոսական կազմի գործունեության գնահատման կանոնակարգը սահմանում է ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի դասավանդման որակի և արդյունավետության գնահատման, դասախոսի աշխատանքի վարձատրման և հավելավճարի կիրառման կարգը:

1.3. Դասախոսական կազմի գործունեության գնահատման կանոնակարգը հաստատում և դրա մեջ փոփոխություններ ու լրացումներ է կատարում ԵՄՀ գիտական խորհուրդը:

1.4. Դասախոսական կազմի գործունեության գնահատումը բուհն իրականացնում է իր կրթական առաքելությանն ու նպատակներին համապատասխան:

1.5. Գնահատումը կատարվում է նախանշված աշխատանքային գործունեության, աշխատանքային պլանների, և դրանց կատարման փաստացի արդյունքների համապատասխանության հիման վրա, ինչպես նաև ինքնագնահատման, փաստերի ներկայացման, դասալսումների և ուսանողների կողմից լրացված գնահատման թերթիկների արդյունքներով:

1.6. Գնահատման գործընթացը դասախոսական կազմին հնարավորություն է տալիս տեղեկանալու աշխատանքի կատարողականին՝ չափելի և սահմանելի թերություններով և ձեռքբերումներով, իսկ ղեկավար կազմին՝ ձեռնարկելու համապատասխան միջոցառումներ:

2. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

2.1. Նպատակ ունենալով խթանել ԵՄՀ դասախոսների որակական անընդհատ աճը, գիտահետազոտական աշխատանքների ակտիվությունը, արտալսարանային աշխատանքները ուսանողների հետ, ուսումնամեթոդական և գիտամեթոդական աշխատանքները, մասնակցությունը համալսարանի և նրա ստորաբաժանումների գործունեության արդյունավետության բարձրացմանը՝ ԵՄՀ ղեկավարությունը որոշեց ներդնել դասախոսների աշխատանքի տարբերակված վարձատրման համակարգ:

3. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՄԱՆ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԸ

3.1. Դասախոսի աշխատանքի վարձատրությունը հաշվարկվում է ըստ նախապես հաստատված տարեկան դրույքաչափի և աշխատանքային պայմանագրի: Պայմանավորված դասախոսի աշխատանքի կատարման որակով այն կարող է աճել: Աշխատողի դրույքաչափը պայմանավորված է տվյալ աշխատանքի կատարման առանձնահատկություններով, պահանջվող որակով և աշխատանքի շուկայում առաջարկի և պահանջարկի հարաբերակցությամբ:

3.2. Աշխատավարձը մեկ օրացույցային ամսվա ընթացքում աշխատողի կատարած աշխատանքի դիմաց վճարվելիք գումարն է, որը վճարվում է ամսական առնվազն մեկ անգամ՝ մինչև հաջորդ

ամսվա 15-ը: Աշխատավարձի ուշացման դեպքում հաշվարկվում է օրական 0.15 (զրո ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) տոկոս տույժ:

3.3. Դասախոսի բազային աշխատավարձն ամեն տարի նշանակվում է ըստ հաստիքացուցակի:

3.4. Դասախոսի հավելավճարը գոյանում է ուսումնական տարվա արդյունքներով իր կուտակած միավորներին համապատասխան:

3.5. Դասախոսների միավորների հաշվարկը կատարվում է ուսումնական տարվա վերջում և ներկայացվում է ամբիոնի նիստում:

3.6. Որակի ապահովման կենտրոնը դասախոսներին, ըստ կուտակած միավորների, բաժանում է երեք խմբի՝ ամենացածր, միջին և ամենաբարձր միավորներ կուտակած:

4. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

4.1. Դասախոսական կազմի գործունեության գնահատման սկզբունքներն են գնահատման՝

- բովանդակության համապատասխանությունը համալսարանի զարգացման գերակայություններին,
- օբյեկտիվությունը և հավաստիությունը,
- թափանցիկությունը և համակարգվածությունը,
- գնահատման տարբեր մեթոդների և տեխնիկաների համատեղումը,
- գնահատվողների խրախուսումը:

5. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

5.1. ԵՄՀ դասախոսների գնահատման համակարգը հիմնված է դասախոսի կատարողականի վրա: Գնահատման արդյուքների ամփոփումն ու վերլուծությունը իրականացնելուց հետո բուհի ռեկտորն այդ արդյունքների հիման վրա ընդունում է վարչական որոշումներ համաձայն որոնց.

- տրամադրվում են անվանական խրախուսական դրամական պարգևներ
- շարունակել համագործակցությունը՝ առանց պայմանագրային փոփոխությունների,
- շարունակել համագործակցությունը՝ վերանայելով վճարման չափը (հնարավոր բարձրացում կամ նվազում),
- ամբիոնին ներկայացվում են դասախոսի վերապատրաստման անհրաժեշտության վերաբերյալ առաջարկություններ,
- համալսարանը կարող է դադարեցնել համագործակցությունը դասախոսի հետ:

5.2. Համալսարանում գործում է դասախոսական կազմի գործունեության գնահատման 100%-անոց համակարգ և հաշվարկվում է կշռված միջին միավոր.

	Գնահատման բաղադրիչները	Գնահատման ձևը	Բաղադրիչների կշիռն արտահայտված տոկոսներով	
I	**Ուսումնամեթոդական գործունեություն**	Դասախոսի կողմից ներկայացված փաստերի հիման վրա հաշվարկված միավորներ (Հավելված 1)	40%	**70%**
		Ամբիոնի վարիչի գնահատմամբ հաշվարկված միավորներ (ամբիոնի վարիչներին գնահատում է Ուսումնա-մեթոդական աշխատանքների գծով պրոռեկտորը), (Հավելված 2)	35%	
		Ուսանողի գնահատմամբ հաշվարկված միավորներ	25%	
II	**Գիտահետազոտական գործունեություն**	Դասախոսի կողմից ներկայացված փաստերի հիման վրա հաշվարկված միավորներ (Հավելված 1)		**20%**
III	**Հասարակական գործունեություն**	Ամբիոնի վարիչի գնահատման հիման վրա հաշվարկված միավորներ (Հավելված 2)		**10%**
			Ընդամենը	**100%**

5.3. Դասախոսի գնահատման նպատակով ամբիոնի վարիչի կողմից դասալսումներն իրականացվում են ԵՄՀ դասալսումների անցկացման և քննարկման կարգին համապատասխան:

5.4. Դասախոսական կազմի գործունեության գնահատման անցկացման կազմակերպումը ԵՄՀ որակի ապահովման պատասխանատվությունն է, վերջինս պատասխանատու է.

- յուրաքանչյուր գնահատվող դասախոսի համար փաստագրական տեղեկատվական բազայի ստեղծման,
- գնահատման գործընթացի համակարգման և հսկողության համար, բազմակողմանի գնահատման արդյունքները մեկ փաստաթղթում ամփոփելու համար:

6. Ուսանողների կողմից դասախոսի գնահատման կարգ

6.1. Ուսանողների կողմից դասախոսների գնահատման ձևաչափը հանդիսանում է դասախոսի կողմից ստեղծած դասընթացը և կրթական միջավայրը ուսանողների տեսանկյունից վերլուծելու և գնահատելու միջոց, ինչպես նաև դասախոսի կրթական գործունեության բարելավմանը խոչընդ-

դոտող գործոնները բացահայտելու հնարավորություն: Գնահատումն իրականացվում է դասախոսի և կրթական միջավայրի, ինչպես նաև դասընթացի գնահատման քարտերի միջոցով:

6.2. Գնահատման իրականացման նպատակն է՝

- նպաստել ուսանողներ-դասախոս կրթական համագործակցությանը,
- խթանել դասախոսնի մասնագիտական աճը՝ առկա բացթողումները ճանաչելու միջոցով,
- շարունակաբար կատարելագործել ԵՄՀ պրոֆեսորադասախոսական աշխատանքների որակը:

6.3. Գնահատումը ներառում է չափանիշներ, որոնք հնարավորինս վերհանում են դասախոսի մասնագիտական պատրաստվածության ուսանողական ընկալումը: Այդ չափանիշներն են՝

- դասախոսի կողմից առարկայական ծրագրի ներկայացումն ու իրականացումը,
- դասախոսի կողմից կիրառվող գնահատման մեխանիզմները,
- դասախոսի կողմից մատուցվող նյութի բովանդակությունը,
- ուսանողների կողմից դասախոսի մատուցած նյութին արձագանքելու հնարավորությունը,
- դասախոսի՝ դասավանդման հմտությունը,
- դասախոսի պարտաճանաչությունը և այլն:

6.4. Գնահատումն իրականացվում է յուրաքանչյուր կիսամյակի ավարտին, ամփոփիչ քննություններից հետո:

6.5. Գնահատման ընթացքում ուսանողներն իրենց սուբյեկտիվ կարծիքի հիման վրա գնահատում են դասախոսի կողմից ստեղծած կրթական միջավայրն ու դասընթացը:

6.6. Գնահատումն իրականացվում է խմբային հարցաթերթիկային հարցման ձևաչափով, պահպանելով խմբային հարցաթերթիկային հարցման կանոնները:

6.7. Գնահատման տվյալների գաղտնիությունը և անանությունը վերահսկվում է ԵՄՀ որակի ապահովման կենտրոնի կողմից:

6.8. Գնահատման արդյունքները վերլուծության են ենթարկվում որակի ապահովման կենտրոնի կողմից:

6.9. Գնահատման արդյունքները պահպանվում են որակի ապահովման կենտրոնում: Գնահատման անհատական արդյունքները հրապարակվում են միայն տվյալ դասախոսի հետ անհատական հարցազրույցի շրջանակներում, որին մասնակցում են հիմնական վարչական աշխատակիցները, սակայն գնահատման տվյալները ընդհանրացված կարգով կարող են դառնալ խմբային քննարկման առարկա՝ նպատակ ունենալով հզորացնելու դասախոսների մասնագիտական կարողությունները:

Հավելված 1. Դասախոսի կողմից ներկայացված փաստերի հիման վրա հաշվարկվող միավորներ

I. Մեթոդական և մասնագիտական վերապատրաստումներ[1]	Վերապատրաստումներից կուտակվող միավորներ. եթե ուստարվա կտրվածքով դասախոսը՝ • ԵՄՀ-ում կամ ՀՀ-ում իրականացված վերապատրաստման է մասնակցել՝ յուրաքանչյուրի համար 2 միավոր; միջազգային վերապատրաստումների համար՝ 4 միավոր • ԵՄՀ-ում կամ ՀՀ-ում կազամերպված վերապատրաստում է վարել, որպես թրեյներ/դասընթացավար՝ յուրաքանչյուրի համար 2 միավոր; միջազգային վերապատրաստումների համար՝ 4 միավոր • Ունի ժամկետում գտնվող յուրաքանչյուր միջազգային վկայականի /TOEFL, IELTS, PMP և այլն/՝ յուրաքանչյուրի համար 4 միավոր
II. Գիտական հրապարակումներ[1]	Գիտական հրապարակումներից կուտակվող միավորներ. եթե ուստարվա կտրվածքով դասախոսը՝ • Ունի հոդված ՀՀ-ում գրախոսվող (ԲՈԿ-ի կողմից ճանաչված) մասնագիտական ամսագրում՝ յուրաքանչյուրի համար 2 միավոր; օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրում՝ 4 միավոր • Ունի հրապարակված մենագրություն հայերեն լեզվով՝ 4 միավոր, օտար լեզվով կամ արտերկրում տպագրված՝ 6 միավոր • Ունի հրապարակված դասագիրք կամ ուսումնամեթոդական ձեռնարկ հայերեն լեզվով՝ 4 միավոր, օտար լեզվով կամ արտերկրում տպագրված՝ 6 միավոր ԵՄՀ անունից միջազգային ազդեցության գործոնով ամսագրերում տպագրման դեպքում միավորները կրկնապատկվում են
III. Գիտաժողովների մասնակցություն[1]	Գիտաժողովների մասնակցությունից կուտակվող միավորներ. եթե ուստարվա կտրվածքով դասախոսը՝ • Մասնակցել է ԵՄՀ-ում կամ ՀՀ-ում կազմակերպված գիտաժողովի (որպես ունկնդրող կամ զեկուցող)՝ յուրաքանչյուրի համար 2 միավոր • Մասնակցել է միջազգային գիտաժողովի (որպես ունկնդրող կամ զեկուցող)՝ յուրաքանչյուրի

[1] Միավորները հաշվարկվում են միայն համապատասխան հիմքերի ներկայացման դեպքում

	համար 4 միավոր
IV. Գիտական և դրամաշնորհային ծրագրեր[1]	Գիտական և դրամաշնորհային ծրագրերից կուտակվող միավորներ. եթե ուստարվա կտրվածքով դասախոսը՝ • Հանդիսանում է ներբուհական կամ ՀՀ-ում իրականացվող գիտական կամ այլ դրամաշնորհային ծրագրի մասնակից՝ 2 միավոր; ծրագրի ղեկավար՝ 4 միավոր • Հանդիսանում է միջազգային գիտական կամ այլ դրամաշնորհային ծրագրի մասնակից՝ 4 միավոր; ծրագրի ղեկավար՝ 6 միավոր
V. Գիտական աստիճան/ կոչում[1]	• Եթե դասախոսը ուսումնական տարում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն ՀՀ-ում՝ 2 միավոր; դոկտորական ատենախոսություն՝ 4 միավոր; արտերկրում պաշտպանած կամ անգլերեն լեզվով ներկայացրած ատենախոսություն՝ 6 միավոր • Եթե դասախոսը ուսումնական տարվա ընթացքում ասպիրանտ է կամ հայցորդ ՀՀ-ում՝ 1 միավոր; արտերկրում՝ 2 միավոր • Եթե դասախոսը ուսումնական տարվա ընթացքում ստացել է դոցենտի գիտական կոչում՝ 2 միավոր, պրոֆեսորի կոչում՝ 4 միավոր
VI. Գիտակազմակերպչական գործունեություն[1]	• Եթե դասախոսը ուստարվա դրությամբ հանդիսանում է գիտական աստիճան շնորհող մասնագիտական խորհրդի անդամ՝ 2 միավոր, մասնագիտական խորհրդի նախագահ/ նախագահի տեղակալ, կամ քարտուղար՝ 4 միավոր • Եթե դասախոսը ուստարվա դրությամբ հանդիսանում է գիտական պարբերականի խմբագրական խորհրդի անդամ՝ 2 միավոր, գիտական պարբերականի խմբագրական խորհրդի նախագահ՝ 4 միավոր, միջազգային գիտական պարբերականի խմբագրական խորհրդի կամ միջազգային գիտաժողովի ծրագրային կոմիտեի անդամ՝ 6 միավոր

Հավելված 2. Ամբիոնի վարիչի կողմից դասախոսի գնահատման ռուբրիկ

Գերազանց /3 միավոր/	Լավ /2 միավոր/	Բավարար /1 միավոր/	Անբավարար /0 միավոր/
Ուսումնամեթոդական գործունեություն			
Դասախոսը **գերազանց** կերպով ներգրավում է ուսանողներին լսարանային և արտալսարանային աշխատանքներում	Դասախոսը **հիմնականում** կարողանում է ներգրավել ուսանողներին լսարանային և արտալսարանային աշխատանքներում	Լսարանային և արտալսարանային աշխատանքներում ուսանողների ներգավվածությունն ապահովելու դասախոսի հմտությունները **թերի** են	Դասախոսն ունի լսարանային և արտալսարանային աշխատանքներում ուսանողների ներգավվածությունն ապահովելու հմտությունների զարգացման **հրատապ կարիք**
Դասախոսը **հանգամանորեն** պատասխանում է ուսանողների ընթացիկ հարցերին, մշտապես ապահովում է հետադարձ կապ	Դասախոսը պատասխանում է ուսանողների ընթացիկ հարցերին, սակայն երբեմն պատասխանները **սպառիչ չեն** լինում, հիմնականում ապահովում է հետադարձ կապ	Ուսանողների ընթացիկ հարցերի դասախոսի պատասխանները **թերի** են, հետադարձ կապ չի ապահովվում	Դասախոսը **խուսափում** է անդրադառնալ ուսանողների ընթացիկ հարցերին
Դասախոսը **գերեզանց** կերպով խթանում է իր ուսանողների վերլուծական մտածողությունը	Դասախոսը **հիմնականում** կարողանում է խթանել իր ուսանողների վերլուծական մտածողությունը	Ուսանողների վերլուծական մտածողության զարգացման դասախոսի հմտությունները **թերի** են	Դասախոսը **չի տիրապետում** ուսանողների վերլուծական մտածողության զարգացման հմտությունների
Դասախոսը **գերազանց** կերպով զարգացնում է ուսանողների հետազոտական հմտությունները	Դասախոսը **հիմնականում** կարողանում է զարգացնել ուսանողների հետազոտական հմտությ ունները	Ուսանողների հետազոտական հմտությունների զարգացման դասախոսի մոտեցումները **թերի** են	Դասախոսը **չի կարողանում** զարգացնել ուսանողների հետազոտական հմտությունները
Դասախոսը **գերազանց** տիրապետում է իր կողմից դասավանդվող նյութի (դասախոսություն և այլ նյութեր) տեսական հատվածին	Դասախոսը **հիմնականում** տիրապետում է իր կողմից դասավանդվող նյութի (դասախոսություն և այլ նյութեր) տեսական հատվածին	Դասախոսի գիտելիքները իր կողմից դասավանդվող նյութի (դասախոսություն և այլ նյութեր) տեսական հատվածին **թերի** են	Դասախոսը **չի տիրապետում** իր կողմից դասավանդվող նյութի (դասախոսություն և այլ նյութեր) տեսական հատվածին
Դասախոսը **տիրապետում** է իր կողմից դասավանդվող նյութի (դասախոսություն և այլ նյութեր) գործնական հատվածին	Դասախոսը **հիմնականում** տիրապետում է իր կողմից դասավանդվող նյութի (դասախոսություն և այլ նյութեր) գործնական հատվածին	Դասախոսի գիտելիքները իր կողմից դասավանդվող նյութի (դասախոսություն և այլ նյութեր) գործնական հատվածին **թերի** են	Դասախոսը **չի տիրապետում** իր կողմից դասավանդվող նյութի (դասախոսություն և այլ նյութեր) գործնական հատվածին
Դասախոսը **մշտապես կիրառում** է ուսումնական տարբեր տեխնոլոգիաներ (աուդիո, վիդեո, Power Point ներկայացումներ, համակարգչային վարժություններ և այլն) նյութի ամրապնդման նպատակով	Դասախոսը **հիմնականում կիրառում** է ուսումնական տարբեր տեխնոլոգիաներ (աուդիո, վիդեո, Power Point ներկայացումներ, համակարգչային վարժություններ և այլն) նյութի ամրապնդման նպատակով	Դասախոսը **երբեմն կիրառում** է ուսումնական տարբեր տեխնոլոգիաներ (աուդիո, վիդեո, Power Point ներկայացումներ, համակարգչային վարժություններ և այլն) նյութի ամրապնդման նպատակով	Դասախոսը **չի կիրառում** ուսումնական տեխնոլոգիաներ

Դասախոսը **մշտապես** զուգակցում է համագործակցային տարբեր մեթոդներ նյութի ամրապնդման նպատակով	Դասախոսը **հիմնականում** զուգակցում է համագործակցային տարբեր մեթոդներ նյութի ամրապնդման նպատակով	Դասախոսը **երբեմն** զուգակցում է համագործակցային տարբեր մեթոդներ նյութի ամրապնդման նպատակով	Դասախոսը **չի տիրապետում** համագործակցային մեթոդների
Առարկայական ծրագրում նշված բոլոր նյութերը դասախոսը **մշտապես** վերբեռնում է MS Teams էլեկտրոնային լսարանում մինչ դասը	Առարկայական ծրագրում նշված բոլոր նյութերը դասախոսը **հիմնականում** վերբեռնում է MS Teams էլեկտրոնային լսարանում մինչ դասը	Առարկայական ծրագրում նշված բոլոր նյութերը դասախոսը **երբեմն** վերբեռնում է MS Teams էլեկտրոնային լսարանում մինչ դասը	Դասախոսը **չի կիրառում** MS Teams հարթակը
Դասախոսն ունի մեթոդական և տեխնոլոգիական **գերազանց** հմտություններ՝ դասընթացները առցանց կամ հիբրիդ տարբերակով կազմակերպելու նպատակով	Դասախոսն ունի մեթոդական և տեխնոլոգիական **բավարար** հմտություններ՝ դասընթացները առցանց կամ հիբրիդ տարբերակով կազմակերպելու նպատակով	Դասախոսն ունի մեթոդական և տեխնոլոգիական **թերի** հմտություններ՝ դասընթացները առցանց կամ հիբրիդ տարբերակով կազմակերպելու նպատակով	Դասախոսը **կարիք ունի վերապատրաստումների**, որպեսզի կարողանա առցանց կամ հիբրիդ տարբերակով կազմակերպելու դասընթացները
Դասախոսը **մշտապես** օբյեկտիվ և հիմնավորված է գնահատում	Դասախոսը **հիմնականում** օբյեկտիվ և հիմնավորված է գնահատում	Հաճախ դասախոսը գնահատում է **ոչ հիմնավորված**	Դասախոսը **չի տիրապետում** օբյեկտիվ գնահատման մոտեցումների
Հասարակական գործունեություն			
Դասախոսը **մշտապես** գործում է ԵՄՀ ներքին կարգերին, կանոնակարգերին, ընթացակարգերին համապատասխան	Դասախոսը **հիմնականում** գործում է ԵՄՀ ներքին կարգերին, կանոնակարգերին, ընթացակարգերին համապատասխան	Դասախոսը **հաճախ չի հետևում** ԵՄՀ ներքին կարգերին, կանոնակարգերին, ընթացակարգերին	Դասախոսը **ծանոթ չէ և չի հետևում** ԵՄՀ ներքին կարգերին, կանոնակարգերին, ընթացակարգերին
Դասախոսը ԵՄՀ կրթական համայնքի **ակտիվ ներկայացուցիչ է**, ով մասնակցում է բուհի ներքին աշխատանքային խմբերի գործունեությանը, ներգրավվում է մեթոդական, գիտական կամ կառավարման խորհրդի աշխատանքներում	Դասախոսը **հիմնականում** մասնակցում է բուհի ներքին աշխատանքային խմբերի գործունեությանը, ներգրավվում է մեթոդական և գիտական խորհրդի աշխատանքներում	Դասախոսը **երբեմն** մասնակցում է բուհի ներքին աշխատանքային խմբերի գործունեությանը, ներգրավվում է մեթոդական և գիտական խորհրդի աշխատանքներում	Դասախոսը միայն դասավանդում է համալսարանում և այլ հանդիպումների **չի մասնակցում**
Դասախոսը **մշտապես** մասնակցում է ամբիոնի նիստերին	Դասախոսը **հիմնականում** մասնակցում է ամբիոնի նիստերին	Դասախոսը **երբեմն** մասնակցում է ամբիոնի նիստերին	Դասախոսը **չի մասնակցում** ամբիոնի նիստերին
Դասախոսը **մշտապես** անհրաժեշտության դեպքում հանդիպում է ԵՄՀ պոտենցիալ ուսանողների հետ, իրականացնում է նրանց մասնագիտական կողմնորոշում	Դասախոսը **հաճախ** անհրաժեշտության դեպքում հանդիպում է ԵՄՀ պոտենցիալ ուսանողների հետ, իրականացնում է նրանց մասնագիտական կողմնորոշում	Դասախոսը **հազվադեպ** է հանդիպում ԵՄՀ պոտենցիալ ուսանողների հետ, իրականացնում է նրանց մասնագիտական կողմնորոշում	Դասախոսը որևէ **մասնակցություն չի ունենում** ԵՄՀ պոտենցիալ ուսանողների հետ հանդիպումների ժամանակ
Դասախոսը **մշտապես** ԵՄՀ ուսանողներին, ըստ անհրաժեշտության, տրամադրում է մասնագիտական խորհրդատվություն	Դասախոսը **հաճախ** ԵՄՀ ուսանողներին, ըստ անհրաժեշտության, տրամադրում է մասնագիտական խորհրդատվություն	Դասախոսը **հազվադեպ** է տրամադրում մասնագիտական խորհրդատվություն ԵՄՀ ուսանողներին	Դասախոսը **հրաժարվում** է ԵՄՀ ուսանողներին տրամադրել մասնագիտական խորհրդատվություն